**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---


**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am**


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«15» մարտի 2024 թվականի N 20-Ա**

## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների դրույթներով. Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Չարենցավան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական թիվ 3 նիստի օրակարգը՝

1) Չարենցավան համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:
2) Չարենցավան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով գումար հատկացնելու մասին:
3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 104-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4) Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:
5) Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող Չարենցավան համայնք գյուղ Արզական թիվ 10 հասցեում գտնվող գույքը վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:
6) Սեփականության իրավունքով քաղաքացիներին պատկանող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
7) Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:
8) Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:
9) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 14-ի N 29 որոշման մեջ լրացում կատարելու մասին:

10) Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական թիվ 4 նիստի գումարման օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Կողմ-16** **դեմ-0** **Ձեռնպահ-8**

**Կողմ-16**

Առաքելյան Նորայր
Բաբայան Արայիկ
Գասպարյան Մելիք
Գևորգյան Գևորգ
Դավթյան Կարեն
Եփրեմյան Բաբկեն
Եփրեմյան Տարոն
Խեչոյան Անահիտ
Մակինյան Վարդան
Մուքայելյան Վալերի
Շահգալդյան Հակոբ
Պապոյան Դավիթ
Պողոսյան Մնացական
Վարդանյան Նորայր
Վարդանյան Սարգիս
Վարդանյան Սևակ

**Ձեռնպահ-8**

Բաբայան Նարեկ
Բաղդասարյան Սահակ
Խաչատրյան Արշակ
Հարոյան Լիլիթ
Սահակյան Գառնիկ
Վարդանյան Նորիկ
Ղամբարյան Գարիկ
Պալյան Գարիկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«15» մարտի 2024 թվականի N 21-Ա**

**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Չարենցավան համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Կողմ-14 | դեմ-8 | ձեռնպահ-2 |
|---|---|---|
| Առաքելյան Նորայր | Բաբայան Նարեկ | Հարոյան Լիլիթ |
| Բաբայան Արայիկ | Բաղդասարյան Սահակ | Խեչոյան Անահիտ |
| Գասպարյան Մելիք | Խաչատրյան Արշակ | |
| Գևորգյան Գևորգ | Սահակյան Գառնիկ | |
| Դավթյան Կարեն | Վարդանյան Նորիկ | |
| Եփրեմյան Բաբկեն | Ղամբարյան Գարիկ | |
| Եփրեմյան Տարոն | Պալյան Գարիկ | |
| Մակինյան Վարդան | Պապոյան Դավիթ | |
| Մուքայելյան Վալերի | | |
| Շահգալդյան Հակոբ | | |
| Պողոսյան Մնացական | | |
| Վարդանյան Նորայր | | |
| Վարդանյան Սարգիս | | |
| Վարդանյան Սևակ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

*Հավելված*

*Չարենցավան համայնքի ավագանու*

*2024 թվականի մարտի 15 -ի*

*N 21-Ա որոշման*

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

1. Հիմնարկի անվանումը - Չարենցավանի համայնքապետարան
2. Փոստային հասցեն՝ ք. Չարենցավան, Կ. Դեմիրճյան հրապարակ 1
3. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման – 61
4. Հիմնարկը սպասարկող գանձապետական ստորաբաժանման անվանումը - ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարան
5. Հիմնարկի գանձապետական ստորաբաժանման հաշվառման համարը- 900136101012, 900136101020
6. Պետական կառավարման վերադաս մարմնի կոդը ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման - 207007
7. Չափի միավորը՝ հազար դրամ

## ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Չարենցավան համայնքի 2023 թվականի վարչական բյուջեի եկամտային մասով նախատեսված փաստացի եկամուտը կազմել է 1 444 161,7 հազար դրամ, որը տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 1 488 277,1 հազար դրամ, կատարվել է 97%-ով (տե՛ս հատված 1):

| Հ/հ | ՄՈՒՏՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2023թ. | Տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ % 2023 |
|---|---|---|---|
| | ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ | 1 615 494,4 | 100 |
| 1 | ՀՈՂԻ ՀԱՐԿ | 5 843,3 | 0,4 |
| 2 | ԳՈՒՅՔԱՀԱՐԿ | 323 508,1 | 22,3 |
| 3 | ՏՈՒՐՔԵՐ | 24 588,6 | 1,7 |
| 4 | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 754 019,7 | 52,1 |
| 5 | ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 340 240,4 | 23,5 |
| 6 | ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 167 294,3 | 11,6 |



Չարենցավան համայնքի 2022 թվականի վարչական բյուջեի եկամուտների տարեկան ճշտված պլանը կազմել է 1 389 999.0հազար դրամ, փաստացին կազմել է 1 363 808.3 հազար դրամ, կամ փաստացի պլանը տարեկան ճշտված պլանի նկատմամբ կատարվել է 98.1 % -ով:

Չարենցավան համայնքի 2021 թվականի վարչական բյուջեի եկամուտների տարեկան ճշտված պլանը կազմել է 1 283 194.1հազար դրամ, փաստացին կազմել է 1 348 342.1 հազար դրամ, կամ փաստացի պլանը ճշտված պլանի նկատմամբ կատարվել է 105 % -ով:

Համայնքի վարչական բյուջեի եկամուտների հավաքագրման 2023, 2022 և 2021 թվականների տվյալներից պարզվում է, որ 2023 թվականի վարչական բյուջեի եկամուտների փաստացի հավաքագրումը 2022 թվականի համեմատությամբ աճել է 80 353.4 հազար դրամով, իսկ 2021 թվականի համեմատությամբ՝ աճել է 95 819.6 հազար դրամով:

Չարենցավան համայնքի 2023 թվականի վարչական բյուջեի տարեկան ճշտված պլանով սեփական եկամուտ է պլանավորվել 825 154.1 հազար դրամ, փաստացի եկամուտը կազմել է 768 271.0 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 93.1%-ով:

Չարենցավան համայնքի 2022 թվականի վարչական բյուջեի տարեկան ճշտված պլանով սեփական եկամուտ է պլանավորվել 568 535.8 հազար դրամ, փաստացի եկամուտը կազմել է 541 600.6 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 95.2%-ով:

Չարենցավան համայնքի 2021 թվականի վարչական բյուջեի տարեկան ճշտված պլանով սեփական եկամուտ է պլանավորվել 460 546.0 հազար դրամ, փաստացի եկամուտը կազմել է 525 724.0 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 114.1%-ով:

Համայնքի վարչական բյուջեի եկամուտների հավաքագրման 2023, 2022 և 2021 թվականների տվյալներից պարզվում է, որ 2023 թվականի վարչական բյուջեի սեփական եկամուտների փաստացի հավաքագրումը 2022 թվականի համեմատությամբ աճել է 226 670.4 հազար դրամով, իսկ 2021 թվականի համեմատությամբ՝ աճել է 242 547.0հազար դրամով:

2023 թվականի ընթացքում գ***ույքային հարկեր անշարժ գույքից*** եկամտատեսակի փաստացի եկամուտը կազմել է 91 185,1 հազար դրամ, որը կազմում է տվյալ եկամտատեսակի եկամուտների պլանի 67,7%-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 6,1%-ով, իսկ գույքային հարկեր այլ գույքից (փոխադրամիջոցների) գծով փաստացի եկամուտը կազմել է 238 166,3 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 129,5%-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 16%-ով:

2022 թվականի ընթացքում ***գույքային հարկեր անշարժ գույքից*** եկամտատեսակի փաստացի եկամուտը կազմել է 102 327,5 հազար դրամ, իսկ գույքային հարկեր այլ գույքից՝ գույքահարկ փոխադրամիջոցների համար եկամտատեսակի գծով պլանավորած 165480.0 հազար դրամի դիմաց փաստացին կազմել է 182 354.5 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 110.2% -ով:

2021 թվականի ընթացքում ***գույքային հարկեր անշարժ գույքից*** եկամտատեսակի փաստացի եկամուտը կազմել է 100 818,2 հազար դրամ, իսկ գույքային հարկեր այլ գույքից՝ գույքահարկ փոխադրամիջոցների համար եկամտատեսակի գծով պլանավորած 137 650.0 հազար դրամի դիմաց փաստացին կազմել է 167 428.5 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 121.6% -ով:

Համայնքի վարչական բյուջեի եկամուտների հավաքագրման 2023, 2022 և 2021 թվականների տվյալներից պարզվում է, որ 2023 թվականին վարչական բյուջեի ***գույքային հարկեր անշարժ գույքից*** եկամտատեսակի տարեկան փաստացի եկամուտը 2022 թվականի համեմատությամբ նվազել է 11 142,4 հազար դրամով, իսկ 2021 թվականի համեմատությամբ՝ նվազել է 9 633,1հազար դրամով, իսկ գույքային հարկեր այլ գույքից՝ ***գույքահարկ փոխադրամիջոցներից*** եկամտատեսակի տարեկան փաստացի եկամուտը 2022 թվականի համեմատությամբ աճել է 55 811,8 հազար դրամով, իսկ 2021 թվականի համեմատությամբ՝ աճել է 70 737,8 հազար դրամով:

2023 թվականին վարչական բյուջեի ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ՝ ***տեղական տուրքերի*** գծով փաստացի եկամուտը կազմել է 15 411,2 հազար դրամ, որը կազմում է տվյալ եկամտատեսակի եկամուտների 104%-ը, տարեկան պլանի նկատմամբ կատարվելով 1,04%-ով:

2022 թվականին վարչական բյուջեի ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ՝ ***տեղական տուրքեր*** եկամտատեսակի գծով պլանավորված 14 390.0 հազար դրամի դիմաց տարեկան փաստացի եկամուտը կազմել է 15 327.4 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 106.5% -ով:

2021 թվականի ընթացքում վարչական բյուջեի ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ՝ ***տեղական տուրքեր*** եկամտատեսակի գծով պլանավորված 14 270.0 հազար դրամի դիմաց փաստացին կազմել է 13 961.9 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 97.8% -ով:

Տեղական տուրքերի 2023, 2022 և 2021 թվականների բերված տվյալներից երևում է, որ 2023 թվականի տեղական տուրքի փաստացի հավաքագրումը 2022 թվականի համեմատ աճել է 83,8 հազար դրամով, իսկ 2021 թվականի համեմատ՝ աճել է 1 449,3 հազար դրամով:

2023 թվականին պետական տուրքերի գծով փաստացի եկամուտը կազմել է 9 177,4 հազար դրամ, որը կազմում է տվյալ եկամտատեսակի եկամուտների 114,7%-ը, տարեկան պլանի նկատմամբ կատարվելով 0,6%-ով:

2022 թվականին ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ՝ համայնքի բյուջե վճարվող ***պետական տուրքեր*** եկամտատեսակի գծով պլանավորված 6 000.0 հազար դրամի դիմաց փաստացին կազմել է 7 357.0 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 122.6% -ով:

2021 թվականի ընթացքում ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ՝ համայնքի բյուջե վճարվող ***պետական տուրքեր*** եկամտատեսակի գծով պլանավորված 6 000.0 հազար դրամի դիմաց փաստացին կազմել է 8 695.6 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 144.9% -ով:

Պետական տուրքերի 2023, 2022 և 2021թվականների բերված տվյալներից երևում է, որ 2023 թվականի պետական տուրքի փաստացի հավաքագրումը 2022 թվականի համեմատ աճել է 1 820,4 հազար դրամով, իսկ 2021 թվականի համեմատ՝ աճել է 481,8 հազար դրամով:

2023 թվականին ***այլ եկամուտներ*** եկամտատեսակի ***գույքի վարձակալությունից եկամուտների*** գծով փաստացի եկամուտը կազմել է 37 328,8 հազար դրամ, որը կազմում է տվյալ եկամտատեսակի եկամուտների 129,5%-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 2,5%-ով:

2022 թվականին ***այլ եկամուտներ*** եկամտատեսակի ***գույքի վարձակալությունից*** եկամուտների գծով պլանավորած 26 744.0 հազար դրամի դիմաց տարեկան փաստացին կազմել է 28 370.6 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 106% -ով:

2021 թվականին վարչական բյուջեի ***այլ եկամուտներ*** եկամտատեսակի ***գույքի վարձակալությունից*** եկամուտների գծով պլանավորած 25 584.0 հազար դրամի դիմաց փաստացին կազմել է 28 147.6 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 110% -ով:

2023, 2022 և 2021 թվականների բերված տվյալներից երևում է, որ 2023 թվականին հավաքագրված եկամուտները 2022 թվականի համեմատությամբ աճել է 8 958,2 հազար դրամով, իսկ 2021 թվականի համեմատությամբ աճել է 9 181,2 հազար դրամով:

2023 թ. **վարչական գանձումներից** փաստացի եկամուտը կազմել է 226 593,5 հազար դրամ, որը կազմում է տվյալ եկամտատեսակի եկամուտների 82,3%-ը, տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 15,2%-ով:

2022 թվականի ընթացքում ***վարչական գանձումներ*** եկամտատեսակի գծով պլանավորած 248 522,8 հազար դրամի դիմաց տարեկան փաստացին կազմել է 197 928,9 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 79,6%-ով:

2021 թվականի ընթացքում ***վարչական գանձումներ*** եկամտատեսակի գծով պլանավորած 148 931,9 հազար դրամի դիմաց տարեկան փաստացին կազմել է 175 407,6 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 117.7%-ով:

2023, 2022 և 2021 թվականների տվյալներից երևում է, որ 2023 թվականին հավաքագրված եկամուտները 2022 թվականի համեմատությամբ աճել է 28 665,6 հազար դրամով, իսկ 2021 թվականի համեմատությամբ աճել է 51 185,9 հազար դրամով:

2023թ պետական բյուջեից ընթացիկ ներքին ***պաշտոնական դրամաշնորհներ*** ստացված կառավարման այլ մակարդակներից նախատեսված 754 019,7 հազար դրամի դիմաց ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի մասով հատկացվել է 741 027,8 հազար դրամ, պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիայի մասով հատկացվել է 1 305,7 հազար դրամ, իսկ նպատակային հատկացումներ /այլ սուբվենցիաներ/-ի մասով հատկացվել է 7 647,7 հազար դրամ՝ որն ուղղվել է արտադպրոցական կրթության ժողովրդական գործիքների և այլընտրանքային ծառայողների սուբվենցիոն ծրագրերի համար:

2022 թվականի ընթացիկ ներքին ***պաշտոնական դրամաշնորհներ*** ստացված կառավարման այլ մակարդակներից նախատեսված 832 257,9 հազար դրամի դիմաց ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի մասով հատկացվել է 810 273.2 հազար դրամ, իսկ նպատակային հատկացումներ /այլ սուբվենցիաներ/-ի մասով հատկացվել է 11 934.4 հազար դրամ՝ որն ուղղվել է արտադպրոցական կրթության ժողովրդական գործիքների և այլընտրանքային ծառայողների սուբվենցիոն ծրագրերի համար, կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների համար հատկացվել է 10 050,3 հազար դրամ:

2021 թվականի ընթացիկ ներքին ***պաշտոնական դրամաշնորհներ*** ստացված կառավարման այլ մակարդակներից նախատեսված 822 618,1 հազար դրամի դիմաց ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի մասով հատկացվել է 813 096.9 հազար դրամ, ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող այլ դոտացիայից հատկացվել է

112.5 հազար դրամ և ՀՀ պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ /սուբվենցիաներ/՝ ստացված կառավարման այլ մակարդակներից, հատկացվել է 9 408.7 հազար դրամ:

## ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

| Հ/հ | ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2023թ. | Տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ % |
|---|---|---|---|
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | 1425109.1 | 100 |
| 1 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 466 999,7 | 32,8 |
| 2 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | -74 648,3 | -5,2 |
| 3 | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 184 767,0 | 13,0 |
| 4 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 43 106,5 | 3,0 |
| 5 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ | 37 274,2 | 2,6 |
| 6 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 742 790,0 | 52,1 |
| 7 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 24 820,0 | 1,7 |
| 8 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ | 0,0 | 0,0 |




2023 թվականին վարչական բյուջեի փաստացի ծախսը կազմել է 1 460 841,9 հազար դրամ, տարեկան պլանի նկատմամբ /1 512 234,3/ այն կատարվել է 96,6% -ով (տես հատված 2):

2022 թվականին վարչական բյուջեի ծախսային մասի պլանը կատարվել է 96.4%-ով, կամ ճշտված պլանով նախատեսված 1 391 501.1 հազար դրամ դիմաց փաստացի ծախսը կազմել է 1 341 353. հազար դրամ:

2021 թվականին վարչական բյուջեի ծախսային մասի պլանը կատարվել է 97.5%-ով, կամ ճշտված պլանով նախատեսված 1 289 692.6 հազար դրամ դիմաց փաստացի ծախսը կազմել է 1 258 338.5 հազար դրամ:

Համայնքի վարչական բյուջեի տարեկան ծախսերի 2023, 2022 և 2021թվականների տվյալներից պարզվում է, որ 2023 թվականի վարչական բյուջեի տարեկան փաստացի ծախսերը 2022 թվականի համեմատությամբ աճել է 119 488,6 հազար դրամ, իսկ 2021 թվականի համեմատությամբ՝ աճել է 202 503,4 հազար դրամ:

2023 թվականի վարչական բյուջեի ***ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ*** հատվածին հատկացվել է 432 410,9 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 29,6%-ը:

2022 թվականի վարչական բյուջեի ***ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ*** հատվածի ծախսային մասի պլանը կատարվել է 96.9%-ով, կամ ճշտված պլանով նախատեսված 428 300.9 հազար դրամի դիմաց ֆինանսավորվել է 415 117.8 հազար դրամ:

2021 թվականի վարչական բյուջեի ***ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ*** հատվածի ծախսային մասի պլանը կատարվել է 97.5%-ով, կամ ճշտված պլանով նախատեսված 397 399.1 հազար դրամի դիմաց ֆինանսավորվել է 387 432.9 հազար դրամ:

Համայնքի վարչական բյուջեի տարեկան ծախսերի 2023, 2022 և 2021 թվականների տվյալներից պարզվում է, որ 2023 թվականի վարչական բյուջեի ***ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ*** հատվածի տարեկան փաստացի ծախսերը 2022 թվականի համեմատությամբ աճել է 17 293,1հազար դրամով, իսկ 2021 թվականի համեմատությամբ՝ աճել է 44 978,0 հազար դրամով:

2023 թվականին վարչական բյուջեի ***տնտեսական հարաբերությունների*** հատվածին հատկացվել է 69 292,5 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 4,7%-ը :

2022 թվականի վարչական բյուջեի ***տնտեսական հարաբերություններ*** հատվածի ճշտված պլանով պլանավորված 36 427.2 հազար դրամի դիմաց ֆինանսավորվել է 36 427.2 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 100%-ով:

2021 թվականի վարչական բյուջեի ***տնտեսական հարաբերություններ*** հատվածի ճշտված պլանով պլանավորված 36 548.4 հազար դրամի դիմաց ֆինանսավորվել է 32 571.5 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 89.1%-ով:

2023, 2022 և 2021 թվականների վարչական բյուջեի ծախսային մասի տնտեսական հարաբերություններ հատվածի տվյալներից երևում է, որ 2023 թվականի տնտեսական հարաբերություններ հատվածի փաստացի ծախսերը 2022 թվականի ծախսերի ֆինանսավորման համեմատ ավելացել է 32 865,3 հազար դրամով, իսկ 2021 թվականի համեմատ ավելացել է 36 721,0 հազար դրամ:

2023 թվականի վարչական բյուջեի ծախսային մասի ***շրջակա միջավայրի պաշտպանություն*** հատվածով ֆինանսավորվել է 180 728,7 հազար դրամ:

2022 թվականի վարչական բյուջեի ծախսային մասի ***շրջակա միջավայրի պաշտպանություն*** հատվածի ճշտված պլանով պլանավորված 176 182,4 հազար դրամի դիմաց ֆինանսավորվել է 170 941.7 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 97%-ով:

2021 թվականի վարչական բյուջեի ծախսային մասի ***շրջակա միջավայրի պաշտպանություն*** հատվածի ճշտված պլանով պլանավորված 156 218.7 հազար դրամի դիմաց ֆինանսավորվել է 154 416.3 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 98.8%-ով:

2023, 2022 և 2021 թվականների տվյալներից երևում է, որ 2023 թվականի շրջակա միջավայրի պաշտպանության աղբահանում հոդվածի պահպանման տարեկան ծախսերը 2022 թվականի աղբահանման ծախսերի ֆինանսավորման համեմատ աճել է 9 787,0 հազար դրամ, իսկ 2021 թվականի համեմատ ավելացել է 26 312,4 հազար դրամով:

2023 թվականին ***բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության*** համար հատկացվել է 8 106,0 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 0,5%-ը:

2022 թվականի վարչական բյուջեի ***բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն*** հատվածի բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ/ այլ դասերին չպատկանող/ հոդվածի ճշտված պլանով պլանավորված 16 470.0 հազար դրամի դիմաց ֆինանսավորվել է 3 976.3 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 24.1%-ով:

2021 թվականի վարչական բյուջեի ***բնակարանային շինարարություն և կոմունալ ծայություն*** հատվածի բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ/ այլ դասերին չպատկանող/

հոդվածի ճշտված պլանով պլանավորված 9 400.0 հազար դրամի դիմաց ֆինանսավորվել է 2 390.6 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 25.4%-ով որից՝

2023, 2022 և 2021 թվականների տվյալներից երևում է, որ 2023 թվականի ***բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն*** հոդվածի պահպանման տարեկան ծախսերը 2022 թվականի ծախսերի ֆինանսավորման համեմատ աճել է 4 129,7 հազար դրամով, իսկ 2021 թվականի համեմատ՝ աճել է 5 715,4 հազար դրամով:

2023 թվականին ***հանգիստ, մշակույթ և կրոն*** ոլորտի պահպանման համար հատկացվել է 33 101,5 հազար դրամ, կազմելով փաստացի կատարված ծախսերի 2,3 %-ը:

2022 թվականին վարչական բյուջեի ***հանգիստ, մշակույթ և կրոն*** հատվածի ճշտված պլանով պլանավորված 36 860.0 հազար դրամի դիմաց ֆինանսավորվել է 31 999.4 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 86.8 %-ով:

2021 թվականի վարչական բյուջեի ***հանգիստ, մշակույթ և կրոն*** հատվածի ճշտված պլանով պլանավորված 33 990.0 հազար դրամի դիմաց ֆինանսավորվել է 28 695.3 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 84.4 %-ով:

2023, 2022 և 2021 թվականների տվյալների համեմատականից երևում է, որ 2023 թվականի հանգիստ, մշակույթ և կրոն հատվածի պահպանման տարեկան ծախսերը 2022 թվականի ֆինանսավորման համեմատ ավելացել է 1 102,1 հազար դրամով, իսկ 2021 թվականին ծախսերի համեմատ ավելացել է 4 406,2 հազար դրամով:

2023 թվականին վարչական բյուջեի ***կրթություն*** հատվածի ճշտված պլանով պլանավորված 732 998,3 հազար դրամի դիմաց ֆինանսավորվել է 712 382,4 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 48,7%-ով, որից՝

նախադպրոցական հիմնարկների պահպանման համար հատկացվել է 395 754,1 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 27,1%-ը, իսկ արտադպրոցական հիմնարկների պահպանման համար հատկացվել է 298 966,5 հազար դրամ, որը կազմում է փաստացի կատարված ծախսերի 20,5%-ը, բարձրագույն մասնագիտական կրթությանը հատկացվել է 14 120,0 հազար դրամ, կրթություն /այլ դասերին չպատկանող/ հատվածով հատկացվել է 3 541,7 հազար դրամ :

2022 թվականի վարչական բյուջեի ***կրթություն*** հատվածի ճշտված պլանով պլանավորված 665 868.7 հազար դրամի դիմաց ֆինանսավորվել է 652 640.6 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 98%-ով, որից՝

նախադպրոցական կրթություն հոդվածի ճշտված պլանով պլանավորված 364 146,0 հազար դրամի դիմաց ֆինանսավորվել է 356 295.6 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 97.8 %-ով:

Բարձրագույն մասնագիտական կրթություն հոդվածի ճշտված պլանով պլանավորված 13 500,0 հազար դրամի դիմաց ֆինանսավորվել է 13 260.0 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 98.2 %-ով:

Արտադպրոցական դաստիարակություն հոդվածի ճշտված պլանով պլանավորված 284 053,0 հազար դրամի դիմաց ֆինանսավորվել է 283 085,0 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 99.6%-ով:

Կրթություն /այլ դասերին չպատկանող/ հոդվածի ճշտված պլանով պլանավորվել է 4 169.7 հազար դրամ:

2021 թվականի վարչական բյուջեի ***կրթություն*** հատվածի ճշտված պլանով պլանավորված 598 032.3 հազար դրամի դիմաց ֆինանսավորվել է 596 054.3 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 99.6%-ով, որից՝

նախադպրոցական կրթություն հոդվածի ճշտված պլանով պլանավորված 335 663.1 հազար դրամի դիմաց ֆինանսավորվել է 335 217.3 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 99.8 %-ով,

արտադպրոցական դաստիարակություն հոդվածի ճշտված պլանով պլանավորված 260 869.2 հազար դրամի դիմաց ֆինանսավորվել է 260 837.0 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 99.9%-ով,

կրթություն /այլ դասերին չպատկանող/ հոդվածի ճշտված պլանով պլանավորվել է 1 500.0 հազար դրամ:

2023, 2022 և 2021թվականների տվյալների համեմատականից երևում է, որ 2023 թվականի կրթություն հատվածի պահպանման ծախսերը 2022 թվականի ֆինանսավորման համեմատ ավելացել է 59 741,8 հազար դրամով, իսկ 2021 թվականի ծախսերի համեմատ ավելացել է 116 328,1 հազար դրամով:

2023 թվականին սոցիալական պաշտպանություն ոլորտի համար հատկացվել է 24 820,0 հազար դրամ:

2022 թվականի վարչական բյուջեի ծախսային մասի ***սոցիալական պաշտպանություն*** հատվածի սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասերին չպատկանող/ հոդվածի ճշտված պլանով նախատեսված 30 300.0 հազար դրամի դիմաց ֆինանսավորվել է 30 250.0 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 99.8%-ով:

2021 թվականի վարչական բյուջեի ծախսային մասի ***սոցիալական պաշտպանություն*** հատվածի սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասերին չպատկանող/ հոդվածի ճշտված պլանով նախատեսված 30 505.0 հազար դրամի դիմաց ֆինանսավորվել է 30 505.0 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 100%-ով:

2023, 2022 և 2021 թվականների տվյալների համեմատականից երևում է, որ 2023 թվականի սոցիալական պաշտպանություն հատվածի պահպանման ծախսերը 2022 թվականի ֆինանսավորման համեմատ նվազել է 5 430,0 հազար դրամով, իսկ 2021 թվականի համեմատ՝ նվազել է 5 685,0 հազար դրամով:

| Հ/հ | ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2023թ. | Տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ % |
|---|---|---|---|
| | | | 2023թ. |
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | 1 669 612,90 | |
| Ա | *ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ* | 1 460 841,80 | 100 |
| 1 | Աշխատանքի վարձատրություն | 276 061,70 | 18,9 |
| 2 | Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում | 260 813,90 | 17,9 |
| 3 | Սուբսիդիաներ | 830 487,80 | 56,8 |
| 4 | Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 85 109,50 | 5,8 |
| 5 | Այլ ծախսեր | 8 368,90 | 0,6 |
| Բ | *ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ* | 208 771,10 | 245,3 |
| 1 | Շենք շինություններ | 156 933,7 | 75,2 |
| 2 | Մեքենաներ և սարքավորումներ | 37 146,7 | 17,8 |
| 3 | Այլ հիմնական միջոցներ | 14690,7 | 7,0 |


Բյուջեի ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերի եռամյա պատկերը
1 800 000,00
1 600 000,00
1 400 000,00
1 200 000,00
1 000 000,00
800 000,00
600 000,00
400 000,00
200 000,00
0,00
2023Ã. Ï³ÝË.
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ


2023թ. բյուջեի ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերի մասնաբաժիններն ընդհանուրի մեջ
16%
17%
1%
9%
50%
2%
0%
5%
Աշխատանքի վարձատրություն
Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում
Սուբսիդիաներ
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ
Այլ ծախսեր
Շենք շինություններ
Մեքենաներ և սարքավորումներ
Այլ հիմնական միջոցներ

## *ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ*
## *ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ*

2023 թվականին ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը կազմել են 244 503,8 հազար դրամ, ճշտված պլանի նկատմամբ /167 294,2 հազար դրամ/ այն կատարվել է 146%-ով: Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ հոդվածով ճշտված պլանով եկամուտ է նախատեսվել 4 718,1 հազար դրամ, փաստացի ֆոնդային բյուջե մուտք է եղել 4 038,5 հազար դրամ:

2022 թվականին հողի իրացումից մուտքեր ճշտված պլանով նախատեսված 254 970.4 հազար դրամի դիմաց մուտք է եղել 219 621.8 հազար դրամ, հետևաբար պլանը կատարվել է 86,1%-ով: Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ հոդվածով ճշտված պլանով եկամուտ է նախատեսվել 15 049.0 հազար դրամ, փաստացի ֆոնդային բյուջե մուտք է եղել 10 050.3 հազար դրամ:

2021 թվականի ընթացքում համայնքի ֆոնդային բյուջե փաստացի մուտք է եղել 73 035.6 հազար դրամ, որից՝ անշարժ գույքի իրացումից մուտքեր՝ 9 140.9 հազար դրամ, հողի իրացումից մուտքեր՝ 63 894.6 հազար դրամ:

2023, 2022 և 2021 թվականների տվյալների համեմատականից երևում է, որ 2023 թվականի ֆոնդային բյուջեի մուտքերը 2022 թվականի համեմատ աճել է 24 882,0 հազար դրամով, իսկ 2021 թվականի համեմատ աճել է 171 468,2 հազար դրամով:

## *ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ*

Չարենցավան համայնքի 2023 թվականի ֆոնդային բյուջեի ծախսային մասի տարեկան ճշտված պլանը կատարվել է 81,3%-ով, կամ ճշտված պլանով նախատեսված ծախսը կազմել է 256 848,9 հազար դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 208 771,1 հազար դրամ:

Չարենցավան համայնքի 2022 թվականի ֆոնդային բյուջեի ծախսային մասի տարեկան ճշտված պլանը կատարվել է 70.1%-ով, կամ ճշտված պլանով նախատեսված ծախսը կազմել է 374 261,0 հազար դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 262 577.1 հազար դրամ:

Չարենցավան համայնքի 2021 թվականին ֆոնդային բյուջեի ծախսային մասի ճշտված պլանը կատարվել է 65.9%-ով, կամ ճշտված պլանով նախատեսված ծախսը կազմել է 175 181.1 հազար դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 115 541.7 հազար դրամ:

2023, 2022 և 2021 թվականների տվյալներից երևում է, որ 2023 թվականի ֆոնդային բյուջեի ծախսերը 2022 թվականի ֆոնդային բյուջեի ծախսերի համեմատ նվազել է 53 806,0 հազար դրամով, իսկ 2021 թվականի համեմատ ավելացել է 93 229,4 հազար դրամով:

2023 թվականի ֆոնդային բյուջեի ***շենքեր և շինություններ հոդվածի*** ճշտված պլանով նախատեսված ծախսը կազմել է 191 232,8 հազար դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 156 933,7 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 82%-ով:

2022 թվականի ֆոնդային բյուջեի ***շենքեր և շինություններ հոդվածի*** ճշտված պլանով նախատեսված ծախսը կազմել է 310 132.0 հազար դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 215 987.9 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 69.6%-ով:

2021 թվականի ֆոնդային բյուջեի ***շենքեր և շինություններ հոդվածի*** ճշտված պլանով նախատեսված ծախսը կազմել է 106 590.1 հազար դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 69 913.3 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 65.6%-ով:

2023, 2022 և 2021 թվականների ֆոնդային բյուջեի հիմնական միջոցներ հատվածի շենքեր և շինություններ հոդվածի տվյալների համեմատականից երևում է, որ 2023 թվականի շենքեր և շինություններ հոդվածի պահպանման ծախսերը 2022 թվականի ֆինանսավորման համեմատ նվազել է 59 054,2 հազար դրամով, իսկ 2021 թվականի համեմատ ծախսերն ավելացել են 87 020,4 հազար դրամով:

2023 թվականի ֆոնդային բյուջեի ***մեքենաներ և սարքավորումներ*** հատվածի ծախսային մասի ճշտված պլանը կատարվել է 88,7%-ով, կամ ճշտված պլանով նախատեսված ծախսը կազմել է 41 898,0 հազար դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 37 146,7 հազար դրամ:

2022 թվականի ֆոնդային բյուջեի ***մեքենաներ և սարքավորումներ*** հատվածի ծախսային մասի ճշտված պլանը կատարվել է 79%-ով, կամ ճշտված պլանով նախատեսված ծախսը կազմել է 47 412.0 հազար դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 37 455.8 հազար դրամ:

2021 թվականի ֆոնդային բյուջեի ***մեքենաներ և սարքավորումներ*** հատվածի ծախսային մասի ճշտված պլանը կատարվել է 65.5%-ով, կամ ճշտված պլանով նախատեսված ծախսը կազմել է 63 273.0 հազար դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 41 479.4 հազար դրամ:

2023, 2022 և 2021 թվականների ֆոնդային բյուջեի ծախսային մասի մեքենաներ և սարքավորումներ հատվածի տվյալների համեմատականից երևում է, որ 2023 թվականի տվյալ հատվածի ծախսերը 2022 թվականի ֆինանսավորման համեմատ նվազել է 309,1 հազար դրամով, իսկ 2021 թվականի համեմատ նվազել է 4 332,7 հազար դրամով:

2023 թվականի ֆոնդային բյուջեի ***այլ հիմնական միջոցներ*** հատվածի ծախսային մասի ճշտված պլանով նախատեսվել է 23 718,1 հազար դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 14 690,7 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 62%-ով:

2022 թվականի ֆոնդային բյուջեի ***այլ հիմնական միջոցներ*** հատվածի ծախսային մասի ճշտված պլանով նախատեսվել է 16 717.0 հազար դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 9 133.4 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 54.6%-ով:

2021 թվականի ֆոնդային բյուջեի ***այլ հիմնական միջոցներ*** հատվածի ծախսային մասի ճշտված պլանով նախատեսվել է 5 318.0 հազար դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 4 149.0 հազար դրամ, կամ պլանը կատարվել է 78%-ով:

2023, 2022 և 2021 թվականների ֆոնդային բյուջեի ծախսային մասի ***այլ հիմնական միջոցներ*** հատվածի տվյալների համեմատականից երևում է, որ 2023 թվականի տվյալ հատվածի ծախսերը 2022 թվականի համեմատ աճել է 5 557,3 հազար դրամով, իսկ 2021 թվականի համեմատ աճել է 10 541,7 հազ. դրամով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«15» մարտի 2024 թվականի N 22-Ա

## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը՝ հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Չարենցավան համայնքի 2024թ-ի բյուջեում հատկացնել 20 000 000 (քսան միլիոն) դրամ գումար՝ 2024թ-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:
2. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանվում են ոլորտներն ու բնակավայրերը:
3. Մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ առաջարկներ ներկայացնելու իրավասություն ունեն համայնքի բնակիչները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (հասարակական կազմակերպություններ, արհեստակցական միություններ, մասնագիտական ասոցիացիաներ, մեդիա խմբեր, հիմնադրամներ և քաղաքացիների այլ խմբեր):
4. Համայնքի ղեկավարին՝
1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում, 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրում
2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկները ներկայացնել ավագանու հավանությանը.
3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

**Կողմ-24** **դեմ-0** **ձեռնպահ-0**

**Առաքելյան Նորայր**

**Բաբայան Արայիկ**

**Բաբայան Նարեկ**

Բաղդասարյան Սահակ

Գասպարյան Մելիք

Գևորգյան Գևորգ

Դավթյան Կարեն

Եփրեմյան Բաբկեն

Եփրեմյան Տարոն

Խաչատրյան Արշակ

Խեչոյան Անահիտ

Հարոյան Լիլիթ

Ղամբարյան Գարիկ

Մակինյան Վարդան

Մուքայելյան Վալերի

Շահգալդյան Հակոբ

Պալյան Գարիկ

Պապոյան Դավիթ

Պողոսյան Մնացական

Սահակյան Գառնիկ

Վարդանյան Նորիկ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Վարդանյան Սևակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Վ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«15» մարտի 2024 թվականի N 23-Ն**

**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 104-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածներով՝ Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 104-Ն որոշման հավելվածի N 1-6 հատվածներում կատարել փոփոխություններ՝

/հազ. դրամ/

| Տողի N | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Ընդամենը | Բյուջեի ավելացում | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Վարչ. մաս | Ֆոնդ. մաս | |
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* |
| 1. | ֆիզիկական անձանց եվ կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից եվ դրամական միջոցներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված արտաքին աղբյուրներից | | 0 | 13500,0 | 0 | 13500,0 |
| 2. | նվիրատվություն, ժառանգություն իրավունքով ֆիզ. անձանցից, կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինությանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից դրամական միջոցներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացվող մուտքեր՝ տրամադրված արտաքին աղբյուր-ից | | 0 | 0 | 15187,39 | 15187,39 |
| 3. | **Հողի օտարումից մուտքեր** | 8411 | 347886,662 | 0 | 3700,0 | 351586,662 |

/հազ. դրամ/

| Բաժին | Խումբ | Դաս | Ծրագրի անվանումը | Հոդված NN | Ընդամենը | Բյուջեի ավելացում | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Վարչ. մաս | Ֆոնդ. մաս | |
| 01 | 1 | 1 | **Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում** | | | | | |
| | | | **Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում** | 5113 | 0 | 0 | 10846,83 | 10846,83 |
| | | | **Վարչական սարքավորումներ** | 5122 | 0 | 0 | 4340,56 | 4340,56 |
| 01 | 6 | 1 | **Ընդհանուր բնույթի ծառայություններ /այլ դասերին չպատկանող/** | | | | | |
| | | | **Վարչական սարքավորումներ** | 5122 | 1650,0 | 0 | 2700,0 | 4350,0 |
| | | | **Այլ մեքենաներ և սարքավորումներ** | 5129 | 15000,0 | 0 | 1000,0 | 16000,0 |
| 09 | 5 | 1 | **Արտադպրոցական կրթություն** | 4637 | 0 | 13500,0 | 0 | 13500,0 |

2. Թույլատրել գնումները կատարել Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-21 դեմ-0 ձեռնպահ-3

Առաքելյան Նորայր
Բաբայան Արայիկ
Բաղդասարյան Սահակ
Գասպարյան Մելիք
Գևորգյան Գևորգ
Դավթյան Կարեն
Եփրեմյան Բաբկեն
Եփրեմյան Տարոն
Խեչոյան Անահիտ
Հարոյան Լիլիթ
Ղամբարյան Գարիկ
Մակինյան Վարդան
Մուքայելյան Վալերի
Շահգալդյան Հակոբ
Պապոյան Դավիթ
Պողոսյան Մնացական
Սահակյան Գառնիկ
Վարդանյան Նորայր
Վարդանյան Նորիկ
Վարդանյան Սարգիս
Վարդանյան Սևակ

Բաբայան Նարեկ
Խաչատրյան Արշակ
Պալյան Գարիկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**«15» մարտի 2024 թվականի N 24-Ա**

**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 90-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. ***ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ 200.0 ՀԱԶ. ԴՐԱՄ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼ՝***

| Բաժին | Խումբ | Դաս | Ծրագրի անվանումը | Հոդված NN | Ընդամենը | Բյուջեի ավելացում | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Վարչ. մաս | Ֆոնդ. մաս | |
| 08 | 4 | 2 | Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ | 4819 | 0 | 200,0 | 0 | 200,0 |

2. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-23 դեմ-0 ձեռնպահ-1

Առաքելյան Նորայր
Բաբայան Արայիկ
Բաբայան Նարեկ
Բաղդասարյան Սահակ
Գասպարյան Մելիք
Գևորգյան Գևորգ
Դավթյան Կարեն
Եփրեմյան Բաբկեն

Խեչոյան Անահիտ

Եփրեմյան Տարոն

Խաչատրյան Արշակ

Հարոյան Լիլիթ

Ղամբարյան Գարիկ

Մակինյան Վարդան

Մուքայելյան Վալերի

Շահգալդյան Հակոբ

Պալյան Գարիկ

Պապոյան Դավիթ

Պողոսյան Մնացական

Սահակյան Գառնիկ

Վարդանյան Նորիկ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Վարդանյան Սևակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» մարտի 2024 թվականի N 25-Ա

## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԱՐԶԱԿԱՆ ԹԻՎ 10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող Չարենցավան համայնք գյուղ Արզական թիվ 10 հասցեում գտնվող գույքը (2.68801 հա հատուկ պահպանվող տարածքների նշանակության հանգստի համար նախատեսված հողամասը, 196.46 քմ մակերեսով հարթակը և 51.7 քմ ու 103,4 խմ պարիսպը սեփականության իրավունքի վկայական N 05022024-07-0199) 5 տարի ժամկետով տարեկան 270.0 հազար ՀՀ դրամ վարձավճարով վարձակալությամբ տրամադրել՝ Մանուկ Հայրապետյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Կողմ-24** **դեմ-0** **ձեռնպահ-0**

**Առաքելյան Նորայր**
**Բաբայան Արայիկ**
**Բաբայան Նարեկ**
**Բաղդասարյան Սահակ**
**Գասպարյան Մելիք**
**Գևորգյան Գևորգ**
**Դավթյան Կարեն**
**Եփրեմյան Բաբկեն**

Եփրեմյան Տարոն

Խաչատրյան Արշակ

Խեչոյան Անահիտ

Հարոյան Լիլիթ

Ղամբարյան Գարիկ

Մակինյան Վարդան

Մուքայելյան Վալերի

Շահգալդյան Հակոբ

Պալյան Գարիկ

Պապոյան Դավիթ

Պողոսյան Մնացական

Սահակյան Գառնիկ

Վարդանյան Նորիկ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Վարդանյան Սևակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ